Հավելված
ՀՀ Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի
ավագանու 2022թ ապրիլի 29-ի N 44- Ա որոշում

ՀԱՂՈՐԴՈՒՄ
ԲԱՂՐԱՄՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2022Թ ԲՅՈՒՋԵԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եկամուտներ

Բաղրամյան համայնքի 2022թ վարչական բյուջեի եկամուտների տարեկան 610110.4 հազար դրամ առաջադրանքի դիմաց փաստացի մուտքերը կազմել են 125847.0 հազար դրամ, կամ առաջին եռամսյակի մուտքերի առաջադրանքը կատարվել է 20,6% -ով , որից սեփական եկամուտների առաջադրանքը 211082.5 հազար դրամի դիմաց կատարվել է 26089.9 հազար դրամ կամ կատարվել է 12,4%-ով :

Հարկային եկամուտներ

Հարկային եկամուտների գծով տարվա համար նախատեսված գույքահարկ 159389.5 հազար դրամ , մուտքը առաջին եռամսյակին կազմում է 17157.2 հազար դրամ կամ կատարվել է 10,8%-ով : Նախորդ տարիների հողի հարկի առաջադրանքը տարվա համար նախատեսված 12000.0 հազար դրամից հավաքագրվել է 5428.8 հազար դրամ կամ կատարվել են 45,2%-ով:

Տեղական տուրքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 2103.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 150.0 հազար դրամ կամ 5,1%-ով:

Պետական պարտքերի առաջադրանքը տարվա համար նախատեսված 1500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 664.5 հազար դրամ կամ 44,3%:

Պետական բյուջեից տրամադրվող դոտացիայի փաստացի մուտքերը կազմել են 99757.1 հազար դրամ :

Գույքի վարձակալությունից առաջադրանքը տարվա համար նախատեսված 11087.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքերը կազմում են 1290.1 հազար դրամ կամ 11,6%:

Օրենքով սահմանված դեպքերում, համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման առաջադրանքը տարվա համար նախատեսված 4900.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 600.0 հազար դրամ կամ 12,2%:

Տեղական վճարների մասով բյուջեում նախատեսված 9603.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 717.0 հազար դրամ կամ 7,5%, որից աղբահանության վճարների մասով կատարվել է 9,6%: Համայնքի պատվերով՝ ծառայությունների մատուցման (մանկապարտեզ և երաժշտական դպրոցներ) մասով կատարվել է 5,7%:

Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար բյուջեում նախատեսված 10500.0 հազար դրամի դիմաց փաստացի մուտքը կազմում է 60,2 հազար դրամ կամ 0,6%:

Ծախսեր

2022թ համայնքի բյուջեի վարչական մասի առաջին եռամսյակի ծախսը կատարվել է 16,7% -ով, 610010.4 հազար դրամ առաջադրանքից կատարվել է 101690.0 հազար դրամ: Ֆոնդային բյուջեի մասի առաջին եռամսյակի ծախսը կատարվել է 4,3%-ով , 360276.0 հազար դրամ առաջադրանքը կատարվել է 15512.7 հազար դրամ ,որից ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների գծով նախատեսված ծախսերը կազմում են՝ վարչական բյուջեն (վ/բ)17,7% իսկ ֆոնդային բյուջեն (ֆ/բ)
4,3%:

Տնտեսական հարաբերությունների վ/բ-ն կազմում են 4,8%-ով իսկ ֆ/բ-7,6%:

Շրջակա միջավայրի պաշտպանության վ/բ-ն 17,1%:

Բնակարանային շինարարության և կոմունալ ծառայության վ/բ-ն 11,5% իսկ ֆ/բ-ն 13,2%:

Հանգիստ , մշակույթ և կրոն վ/բ-ն 5.1% իսկ Ֆ/բ-ն 83,9% այդ թվում մշակույթի տներ, ակումբներ,կենտրոններ վ/բ-ն 4.8% իսկ Ֆ/բ-ն 83,9%:

Կրթության վ/բ-ն 6,4%,որից նախադպրոցական կրթության վ/բ-ն 4,2%, երաժշտական դպրոցի վ/բ-ն 16,0%:

Սոցիալական պաշտպանության վ/բ-ն 78,5%: